



ՎԱՀԱՆ ԴԱՆՈՒՄՅԱՆ

ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների
ամբիոնի ասպիրանտ

«ՈՒՂԵՂՆԵՐԻ ԱՐՏԱՀՈՍՔԻ» ՀԱՄԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԸ ԱՐԴԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

Գիտատեխնիկական հեղափոխության ծավալմանը զուգընթաց, աշխատուժի միջազգային միգրացիոն գործընթացներում առավել կարևոր տեղ է գրավում բարձր որակավորում ունեցող աշխատողների տեղաշարժը, որը ստացել է «ուղեղների արտահոսք» անվանումը: Այդ եզրույթն առաջացել է XX դարի 50-60-ական թվականներին Արևմտյան Եվրոպայի երկրներում ծագած նոր երևույթի բնութագրման համար: Խոսքը Եվրոպայից ԱՄՆ, Կանադա և Ավստրալիա երիտասարդ տաղանդավոր գիտնականների և տեխնոլոգների արտագաղթի մասին էր: Որոշ տնտեսագետներ «ուղեղների արտահոսքի» փոխարեն օգտագործում են ավելի չեզոք տարբերակներ, օրինակ՝ «ուղեղների փոխանակում» (Brain Exchange), «ուղեղների շարժունություն» (Brain Mobility): Սրանով փորձում են ընդգծել այս երևույթի ոչ միայն բացասական, այլ նաև դրական կողմերը:

Բարձրորակ մասնագետների արտահոսքը մեծ վնաս է հասցնում դոնոր երկրներին, քանի որ վերջիններս կորցնում են ոչ միայն նրանց պատրաստման համար կատարած ծախսերը, այլև տնտեսության առաջընթացին անհրաժեշտ աշխատանքային ռեսուրսների ամենաօգտակար մասը:

Ուղեղների արտահոսքը վտանգ է ներկայացնում երկրի զարգացման հեռանկարների առումով, որը կառավարությունների առջև խնդիր է դնում համապատասխան միջոցառումներով կանխելու այն, հակառակ դեպքում դա վերջիվերջո կարող է տնտեսական և սոցիալական աղետների պատճառ դառնալ: Որոշ տնտեսագետներ ուղեղների արտահոսքը դիտում են որպես սպառնալիք ազգային անվտանգությանը, ուստի մի շարք զարգացող երկրների կառավարություններ կիրառում են այնպիսի միգրացիոն քաղաքականության, որով կկանխվի իրենց երկրներից որակավորված աշխատուժի արտահոսքը դեպի արտասահմանյան երկրներ:

Մինչդեռ, տնտեսապես զարգացած երկրներին ավելի ծեռնտու է թույլ զարգացած երկրներից պատրաստի մասնագետների ներհոսքը, քան նրանց պատրաստումը տեղում, որը մեծ ծախսեր կպահանջի: Տնտեսումը մեծանում է նաև այլ երկրներից եկած պատրաստի մասնագետների երկարատև ժամանակաշրջանում աշխատանքից՝ նկատի ունենալով վճարման և սոցիալական ծախսերի տարբերությունները:

Կա նաև այլ կարծիք, թե ուղեղների արտահոսքը կարող է դոնոր երկրում նպաստել մարդկային կապիտալի զարգացմանը: ԱՄՆ-ում զարգացող երկրներից ներգաղթած բժիշկները և բուժքույրերը աշխատանքի տեղավորվելու մեծ հնարավորություններ ունեն, որը դոնոր երկրներում խթաններ է ստեղծում ավելացնելու այդ մասնագիտություններով կրթություն ստացողների թվաքանակը: Դոնոր երկիրը, այլ հավասար պայմաններում, որոշակի օգուտ է ստանում, որն արտահայտվում է դրամական փոխանցումների (տրանսֆերտների) և ներդրումների ձևով, ինչպես նաև ռեցիպիենտ (ընդունող) երկրում ձեռք բերած հմտությունները և փորձը հայրենիք տեղափոխելու միջոցով: Փաստերը վկայում են, որ ուղղակի կապ կա ԱՄՆ-ում որակավորված ներգաղթյալների (իմիգրանտ) թվի և այստեղից դեպի դոնոր երկրներ ՕՈՒՆ-ների մակարդակների միջև: Փորձագետների գնահատմամբ՝ զարգացող շատ երկրներ յուրաքանչյուր որակավորված արտագաղթյալի (եմիգրանտ) հաշվով տարեկան ստանում են 500-2000 դոլար եկամուտ¹:

Նախկինում, որպես կանոն, բարձր որակավորում ունեցող մասնագետները զարգացող երկրներից տեղափոխվել են զարգացած երկրներ, որին նպաստել են հետևյալ գործոնները.

- ընդունող երկրներում աշխատավարձի բարձր մակարդակը,
- ստեղծագործական աշխատանքի լայն հնարավորությունները,
- տեխնիկական միջոցներով և լաբորատոր պայմաններով առավելազույն ապահովվածությունը,
- սոցիալ-կենցաղային բարենպաստ պայմանները,
- ժողովրդավարությունը,
- դոնոր երկրներում գիտատար կամ բարձրտեխնոլոգատար արտադրությունների բացակայությունը:

Հետագայում տեղի է ունեցել (և ունենում է) հակառակ գործընթացը՝ շատ գիտնականներ, ինժեներներ, բժիշկներ, բարձրագույն կրթությամբ այլ փորձառու մասնագետներ զարգացած երկրներից տեղափոխվում են զարգացող երկրներ՝ կապված այդ երկրներում բարձրտեխնոլոգատար արտադրությունների զարգացման հետ:

Արդի ժամանակաշրջանում ուղեղների արտահոսքը դարձել է համաշխարհային տնտեսության զարգացման միտումներից մեկը: Շատ երկրներում ստեղծվում են այնպիսի պայմաններ, որոնք թելադրված են գիտատեխնիկական առաջընթացի և արդյունաբերության առաջատար նոր ճյուղերի զարգացմամբ: Ընդհանրապես, որպեսզի ընդունող երկրի օգուտը հասնի առավելազույնի, վերջինս պետք է ներմուծի այնպիսի աշխատուժ, որի պակասը զգացվում է, և որի պատրաստման համար պահանջվում են մեծ ծախսեր:

Աշխարհի տարբեր երկրներից բարձր որակավորում ունեցող մասնագետների ներգրավման բավական մեծ փորձ ունի ԱՄՆ-ը: Ուղեղների ներ-

¹ Տե՛ս **Gibson J., McKenzie D.**, Eight questions about brain drain, 2011, էջ 16:

հոսքը դեպի ԱՄՆ տեղի է ունենում տարբեր երկրներից և տարբեր ուղիներով²:

XX դարի 90-ական թվականների սկզբներից դեպի ԱՄՆ բարձր որակավորում ունեցող աշխատուժի ներհոսքը Արևմտյան Եվրոպայից և նախկին ԽՍՀՄ հանրապետություններից ոչ միայն չի դադարում, այլև աճում է ավելի բարձր տեմպերով: Վերջին 30 տարիների ընթացքում ԱՄՆ-ը գրեթե 300000 բարձրորակ մասնագետների (գարգացող և Արևմտյան Եվրոպայի երկրներից) ապահովել է աշխատանքով: Այս ճանապարհով երկիրը XX դարի վերջին քառորդում տնտեսել է 15 մլրդ դոլար՝ կրթության և գիտության բնագավառներում կատարվելիք ծախսերի հաշվին³: Գիտնականների և բարձր որակավորում ունեցող այլ մասնագետների աշխատանքից ԱՄՆ-ը տարեկան շահում է 80-100 մլրդ դոլար⁴: ԱՄՆ-ի տնտեսության համար ուղեղների ներհոսքի դրական ազդեցությունն ակնհայտ է: Բավական է ասել, որ 1980-ական թվականներին ինժեներային և համակարգչային գիտությունների գծով դոկտորների 40%-ը և բուհերի տեխնիկական գիտությունների դասախոսների 25%-ը ներգաղթյալներ էին: 90-ականների վերջերին 13 մլն ներգաղթյալներ տարեկան վաստակում էին 240 մլրդ դոլար և վճարում ավելի քան 90 մլրդ դոլար հարկ: Այնինչ, ԱՄՆ-ի Կառավարությունը տարեկան ծախսում էր 5 մլրդ դոլար՝ ներգաղթյալներին սոցիալական օգնություն տրամադրելու նպատակով: Փաստորեն, այսկերպ ստացված օգուտը, զուտ դրամական արտահայտությամբ, հսկայական է: Անգնահատելի է բարձր որակավորում ունեցող եկվորների ներդրումը ԱՄՆ-ի հատկապես գիտության, բժշկության և մշակույթի զարգացման գործում: 90-ականների վերջին բնական և ճշգրիտ գիտությունների բնագավառում աշխատողների 23%-ը ներգաղթածներ էին⁵:

Ուղեղների արտահոսքը Եվրոպայում ունի երկու միտում. առաջինը բարձր որակավորում ունեցող մասնագետների շարժն է Արևմտյան Եվրոպայից դեպի ԱՄՆ, երկրորդը՝ Արևելյան և Հարավարևելյան Եվրոպայից դեպի Արևմտյան Եվրոպայի երկրներ, որն ավելի դյուրին է դարձել ԵՄ-ի նոր ընդլայնման հետևանքով: Եվրոպական միությունն իրականացնում է «blue card»-ի քաղաքականություն՝ ամերիկյան «green card»-ի նման, որով փորձում է Ասիայից, Աֆրիկայից և Լատինական Ամերիկայից ներգրավել բարձր որակավորում ունեցող աշխատուժ: Չնայած ԵՄ-ն ինտենսիվ ներգաղթի կարիք ունի, որպեսզի չեզոքացնի բնակչության ծերացման հետևանքները, այնուամենայնիվ, ազգային քաղաքական կուսակցությունները կոչ են անում օրենսդրորեն սահմանափակել ներգաղթը դեպի Եվրոպա: Ինչպես գիտենք, գաղթյալները (միգրանտ) բեռ և սոցիալական խնդիրների պատճառ են դառնում պետության համար: Այնուամենայնիվ, չպետք է մոռանալ, որ Արևմտյան Եվրոպան աշխարհի ամենազարգացած տարածաշրջաններից մեկն է, ու թեև դրան ևս բնորոշ են արտագաղթի երևույթներ, սակայն դեռևս բազմաթիվ գիտնականներ գերադասում են մեկնել այնտեղ: Այսպիսով՝ մասնագետների արտագաղթն ու ներգաղթը գրեթե հավասարակշիռ են:

Սոցիալիստական համակարգի փլուզումից հետո բարձր որակավորում ունեցող աշխատուժի միջազգային շուկան համալրվեց Արևելյան Եվրոպայից

² Տե՛ս Экономическая теория (под. ред. Видяпина В., Журавлевой Г.). М., 1997, էջ 67:

³ Տե՛ս **Авдокушин Е.**, Международные экономические отношения (учебное пособие, 5-ое издание). М., 2000, էջ 124:

⁴ Տե՛ս Экономическая теория, նշվ. հրատ., էջ 67:

⁵ Տե՛ս **Авдокушин Е.**, նշվ. աշխ., էջ 185:

և նախկին ԽՍՀՄ հանրապետություններից արտագաղթածների հաշվին: Տնտեսական անկման պատճառով հնարավոր չէր կանխել ուղեղների արտահոսքն այդ երկրներից: Այսպես՝ վերջին երկու տասնամյակում Ռուսաստանի համար խոշոր հիմնախնդիր է դարձել ոչ միայն «կապիտալի փախուստը», այլ նաև մեծ թվով գիտնականների և բարձր որակավորում ունեցող այլ աշխատողների արտահոսքը: Ավելի քան 500.000 ռուս գիտնականներ և համակարգչային ծրագրավորողներ 1990-ական թվականներից հետո մեկնեցին արտասահման: Ուղեղների արտահոսքի պատճառով Ռուսաստանը տարեկան կորցնում է 50-60 մլրդ ԱՄՆ դոլար. ռուս գիտնականների 1/3-ն աշխատում է արտերկրում⁶: Ռուս գիտնականները պահանջված են հատկապես ԱՄՆ-ում, Գերմանիայում, Իսրայելում, Հարավային Կորեայում, Չինաստանում, Բրազիլիայում, Արգենտինայում, Մեքսիկայում և այլ երկրներում⁷:

Այսպիսով՝ ուղեղների արտահոսքը դոնոր երկրների վրա թեև հիմնականում բացասաբար է անդրադարձնում, այնուամենայնիվ, պետք է նաև ընդունել, որ ինչպես ժամանակավոր օրինական աշխատանքային միգրացիան, այնպես էլ ուղեղների արտահոսքը ինչ-որ չափով կարող են շահավետ լինել տվյալ պետության համար, եթե դրանք վտանգում են երկրի ազգային անվտանգությունը:

ՀՀ-ն նույնպես ակտիվորեն մասնակցում է աշխատուժի միջազգային միգրացիոն գործընթացներին: Վերջին երկու տասնամյակում բնակչության արտագաղթն իր կնիքն է դրել երկրի սոցիալ-տնտեսական և ժողովրդագրական զարգացման վրա: Սակայն անկախացման տարիներից ի վեր մեր երկրի ամենամեծ խնդիրներից մեկը մտավոր ներուժի արտահոսքն է, որի հետևանքով տնտեսական կորուստը բավական մեծ է և ունի երկարաժամկետ դրսևորում, քանի որ որակյալ աշխատուժի պատրաստման նպատակով կատարվում են երկարաժամկետ ներդրումներ:

Իսկ ովքե՞ր են գնում Հայաստանից և ո՞ր, ինչպիսի՞ն է ընդունող երկրների վերաբերմունքը մեր բարձրորակ մասնագետների նկատմամբ: Սրանք լուրջ հարցեր են, որ պահանջում են համազոր պատասխաններ: Նշենք, սակայն, մի կարևոր հանգամանք. այս բնագավառում կատարված քանակական վերլուծությունները չեն կարող ներկայացնել երևույթի ամբողջական պատկերը, քանի որ անգամ երկու խոշոր գիտնականի մեկնումն արտերկիր կարող է կասեցնել գիտության մի ամբողջ ճյուղի զարգացումը:

Գիտական կադրերի համաշխարհային շուկայում մեծ պահանջարկ ունեն այն ոլորտի մասնագետները, որոնք պայմանավորում են ժամանակակից գիտության և տեխնոլոգիայի զարգացման հեռանկարները: Հիմնականում ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության, ծրագրավորման մասնագետներն են հեռանում մեր երկրից: Գրեթե բոլոր զարգացած երկրները վարում են լավագույն գիտնականների ներգրավման բարենպաստ քաղաքականություն: Այս իմաստով, առաջին տեղը զբաղեցնում է ԱՄՆ-ը, որին հետևում են Գերմանիան, Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան և Կանադան: Սակայն միաժամանակ պետք է նշել, որ արտասահմանում գիտնականներին միշտ չէ, որ գրկաբաց են ընդունում: Մի կողմից՝ ընդունող երկրները խթանում են

⁶ Տե՛ս Ակոբովա Ե., Воронкова Օ., Гавриленко Н., *Мировая экономика и международные экономические отношения /для студентов вузов/*. Ростов на Дону, 2000, էջ 335:

⁷ Տե՛ս Авдокушин Ե., նշվ. աշխ., էջ 185:

նրանց հոսքն իրենց երկրներ, մյուս կողմից՝ դրվում են որոշակի սահմանափակումներ: Դրա պատճառն այն է, որ ընդունող երկրի գիտնականների շրջանում մեծանում է դժգոհությունը ներգաղթած գիտնականների և իրենց միջև առաջացած մրցակցության պատճառով:

Իսկ ովքե՞ր են մնում իրենց հայրենիքում և ինչո՞ւ: Մնացողների մեծ մասը վստահ է, որ կարող է իր գիտական ծրագրերն իրագործել հայրենիքում, մյուսներն էլ համոզված են՝ այս ծանր պայմաններում չի կարելի թողնել հայրենիքն ու հեռանալ: Գիտնականների մի մասն էլ հրաժարվում է արտագաղթի մտքից՝ ոչ բավարար որակավորվածության, լեզվի չիմացության և ընտանեկան հանգամանքներից ելնելով: Այս պարագայում մեկնողների մեջ մեծանում է հատկապես երիտասարդ գիտնականների տեսակարար կշիռը:

Գիտնականների արտագաղթը ինտենսիվ է եղել XX դարի 90-ական թվականներին: 1992-2002 թթ. մեր հանրապետությունից արտագաղթած 691000 բնակչության 29%-ը եղել են բարձրագույն կրթություն և գիտական աստիճան ունեցող անձինք: Այդ ժամանակահատվածում հանրապետությունը լքել են 3764 գիտության դոկտորներ և թեկնածուներ:

Բավական է նշել, որ գիտական հետազոտություններ և մշակումներ կատարող կազմակերպությունների մեջ ներառված գիտությունների դոկտորների թիվը 2007 թ. 472 էր, իսկ 2011 թ.՝ 412: Գիտությունների թեկնածուների քանակը 2007 թ. 1960 էր, իսկ 2011 թ.՝ 1554, այսինքն՝ նվազել է 414-ով: Գիտական հետազոտություններ և մշակումներ կատարող կազմակերպությունների քանակը ևս կրճատվել է վերջին հինգ տարիների ընթացքում՝ 89-ից հասնելով 72-ի: Զգալիորեն կրճատվել է նաև ասպիրանտների թիվը. 2007 թ. 1414 էր, իսկ 2011-ին՝ 1054: Ավելացել են գիտական հետազոտությունների և մշակումների վրա կատարված ներքին ծախսերը: 2007-ին դրանք կազմել են մոտ 6 միլիարդ դրամ, իսկ 2011-ին՝ 9.2 միլիարդ, որից բյուջետային հաշվին կատարված ծախսերն ավելացել են մոտ 2 անգամ՝ 3.3 միլիարդից հասնելով 6 միլիարդ դրամի⁸: Աձել է հանրապետության բուհերի թիվը, իսկ մեր տնտեսությունն այդքան շրջանավարտների կարիք չունի, որի հետևանքով ավելանում է բարձրագույն կրթությամբ զործազուրկների թիվը, որոնք ստիպված բռնում են արտագաղթի ճանապարհը:

Բարձր որակավորում ունեցող մասնագետների համար աշխատատեղերը քիչ են, քանի որ նրանց կարիքն ունեցող կազմակերպությունները և գիտահետազոտական ինստիտուտները հիմնականում չեն գործում: Պատահական չէ, որ ՀՀ-ում պաշտոնապես գրանցված զործազուրկների ընդհանուր թվի մեջ բարձրագույն, միջնակարգ մասնագիտական և ընդհանուր միջնակարգ կրթություն ունեցողների տեսակարար կշիռը 90%-ից ավելի է: Գիտնական գաղթյալները նախապատվությունը տալիս են այն երկրներին, որտեղ կրթություն - եկամուտ կապն առավել տեսանելի է: Այս իմաստով առաջին հերթին պետք է նշել ԱՄՆ-ը, որտեղ առավել աշխատունակ՝ 25-44 տարիքային խմբի համար 17 և ավելի տարի կրթություն ունեցողների տարեկան եկամուտները շուրջ չորս անգամ գերազանցում են 12 տարուց պակաս կրթություն ունեցողների եկամուտը: Նման օրինաչափություն գոյություն ունի նաև մյուս զարգացած երկրներում: Ուղեղների արտահոսքն այսօր էլ շարունակվում է և կշարունակվի այնքան ժամանակ, քանի դեռ պետությունն իր

⁸ Տես Հայաստանի վիճակագրական տեղեկագիրք, Եր., 2012, էջ 146,147:

սահմաններում չի ստեղծել անհրաժեշտ պայմաններ անձի կայացման, նրա մտավոր ներուժի օգտագործման համար:

Չնայած ՀՀ միգրացիայի պետական կարգավորման ոլորտում կատարված դրական տեղաշարժերին, այնուամենայնիվ, իրավիճակը շարունակում է մնալ բարդ: Միգրացիոն հոսքերի ամենաշարժունակ խումբը երիտասարդներն են, ուստի աշխատանքի տեղավորման հարցը չլուծելու դեպքում այսօր և մոտակա տարիներին նրանք կշարունակեն լքել հանրապետությունը: Ուղեղների շարունակական արտահոսքը սպառնում է մեր երկրի միգրացիոն դիրքերի թուլացմանը, ուստի անհրաժեշտ է պետական խիստ վերահսկողություն իրականացնել այն կազմակերպությունների գործունեության նկատմամբ, որոնք զբաղվում են երիտասարդների արտագնա աշխատանքների կազմակերպման հարցերով: Այդ կազմակերպությունների և պետական համապատասխան իրավական մարմինների միջև պետք է ձևավորվեն պայմանագրային պարտավորություններ, որոնցով առաջինները կստանձնեն գաղթյալների վերադարձի պատասխանատվությունը: Դա կստիպի նման կազմակերպություններին պատասխանատվություն կրել արտագնա աշխատանքի կամ սովորելու մեկնած անձանց վերադարձի համար: Բացի այդ, նրանք շահագրգռված կլինեն համագործակցելու ընդունող երկրների միգրացիոն կենտրոնների հետ, կձևավորվի ժամանակավոր միգրանտների մասին տեղեկատվական բանկ, որը հնարավորություն կտա վերադարձ ապահովելու պայմանագրային ժամկետներում:

Մտավոր ներուժը ազգային հարստություն է, որով պայմանավորված է յուրաքանչյուր ազգի տնտեսական աճը, բարեկեցության մակարդակի բարձրացումը, ներկան և ապագան: Հետևաբար՝ երկրի կառավարությունը պետք է փորձի մշակել և իրականացնել այնպիսի միգրացիոն քաղաքականություն, որը ոչ միայն կմեղմի արտագաղթը, այլև համապատասխան պայմաններ կստեղծի մեր այն քաղաքացիների վերադարձի համար, ովքեր այսօր թե՛ օրինական, թե՛ անօրինական ճանապարհով ցրվել են աշխարհի տարբեր երկրներով մեկ:

Այսպիսով՝ շարունակվում է *ուղեղների արտահոսքը*, ինչը թուլացնում է երկրի գիտական, ստեղծագործական և տնտեսական ներուժը: Արտագաղթը կանխելու համար անհրաժեշտ է բարձրացնել մեր ժողովրդի բարեկեցության աստիճանը և վաղվա օրվա նկատմամբ նրա հավատը:

ВАГАН ГАЛУМЯН

Аспирант кафедры „Международных экономических отношений” АГЭУ

Глобальный характер „Утечки мозгов” в настоящее время.- „Утечка мозгов” это международная миграция высококвалифицированной рабочей силы, которая, порой, имеет массовый характер. Это название произошло в 50-60-х годах XX века в Западной Европе для характеристики нового явления. В то время много молодых, талантливых ученых и технологов эмигрировали из Европы в США, Канаду и Австралию. Эмиграция высококвалифицированных специалистов наносит большой ущерб странам-донорам, так как они не только теряют расходы на подготовку, но и самую выгодную часть трудовых ресурсов, необходимых для экономического прогресса.

VAHAN GHALUMYAN

Post-graduate at the Chair of
„International Economic Relations”
at ASUE

Global Nature of „Brain-Drain” in Our Days.- „Brain-drain” means international migration of highly qualified labor force, including scientists, which sometimes has a mass character. This term originated in the XX century in Western Europe for the characterization of a new phenomenon. At that time young talented scientists and technologists migrated from Europe to USA, Canada and Australia. Such kind of emigration does great harm to the donor countries, as they are not only losing the costs of preparing professionals, but also the most healthy part of the labor resources needed for economic progress.